ԱՆՀԱՏՆ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Ավետիք Իսահակյանին ուղղված մի նամակում Շանթը նշում է, թե գրագետի համար որքան կարևոր է գրական երկերի և նրանց քննադատության ընթերցումը, այնուամենայնիվ «թե երկերը, թե քննադատությունները որպես ցան անթիվ են, որ երկար տարիներու աշխատանք կուզե».[1] ինչ կարծիք կա կարդալ ամեն ծեռքն ընկած գիրքը, մանավանդ որ «անսահման չափով անպետք ու հիմար գրվածքներ կան»: Այդ տարիները բացառիկ էին Շանթի իմացաբանության մեջ՝ նոր մտահորիզոններ բացահայտելու տեսանկյունից: Ուշագրավ է հատկապես նրա՝ բնական գիտություններով տարվելը: Այդ բնագավառում կատարած ուսումնասիրություններն ու բնագիտական հայտնագործությունները բոլորովին նոր ձև տվեցին նրա աշխարհայացքին: «Շուտով տեսա, որ մանկավարժությունն առանց հոգեբանության և հոգեբանությունն ալ առանց բնախոսության և բնախոսությունն ալ առանց բնական գիտություններու՝ վերացական բան մըն էր միայն... ամբողջ ժամանակս տրամադրած էի մարդակազմություն, կենդանաբանություն, բնագիտություն և տարրագիտություն սովորելու»[2]: Բնականաբար Շանթ արվեստագետի իմացական աշխարհում տեղի ունեցած նորամուծությունները պիտի իրենց արտահայտությունն ունենային նրա հերոսների մտորումներում, վարքագծում և նոր հատկանիշների դրսևորման արդյունք հանդիսանային:

Լայպցիգում գրված «Դուրսեցիները» շարունակում էր «Երազ օրերի» գաղափարը, սակայն այս վեպի հերոսների ինքնագիտակցումն ավելի շեշտված է. նրանք որոշակի նպատակներ ունեն և առաջնորդվում են դրանց իրագործման ծրագրերով: Այս շրջանում գրված վեպերի հերոսները բարոյական նկարագիր ունեցող երիտասարդներ են, որոնք տարված են հասարակական ազգանվեր գործունեություն ծավալելու ձգտումներով կամ ազգային-ազատասիրական ծրագրերով:

Ս. Սարինյանը իր մենագրության մեջ գրում է. «Դուրսեցին հայ հեղափոխականն է, և նրանով Շանթը գրականության մեջ բերում է նոր հերոս»:[3] Գրական ժառանգությամբ այս հերոսը սերում է Ռաֆֆու «Խենթ» և «Կայծեր» վեպերի հերոսներից: Թեպետ Ռաֆֆու հերոսները հանդես են գալիս ռոմանտիկական խանդավառությամբ, այնուամենայնիվ, նրանց գործելու դաշտն ակնառու է, և ընթերցողն ականատես է լինում այդ հերոսների՝ նախապես ծրագրված գործունեությանը: «Կայծեր» վեպի հերոսները Ասլանը, Կարոն, Սաքոն և որսորդ Ավոն դեռևս «Խաչագողի հիշատակարան» վեպում անտառի խորհրդավոր մի տնակում գաղտնի և անհասկանալի ծրագրեր էին կազմում:

Ահա տարիներ հետո ամերիկացի Ֆիշերի օժանդակությամբ ուսումնառություն առնելով՝ նրանք մասնագիտական կրթություն ստացած վերադառնում են հայրենիք, և մեծ գործի նվիրյալ Ավոյի հետ սկսում են իրագործել իրենց ծրագրերը, որոնք, բնականաբար, հղկվել ու կենկրետացել էին: Ահա «Կայծեր» վեպում այդ հերոսները խորհրդավոր և արկածներով լեցուն շրջագայություն են կատարում ամբողջ Հայաստան աշխարհով՝ իրագործելով իրենց ծրագրերը:

Շանթի հերոսների նպատակաուղղված ծրագրերը, սակայն, պիտի իրագործվեն առաջին հարմար առիթի դեպքում: Նոր սերնդի այս երիտասարդները հանդես են գալիս նոր հանգամանքներում՝ պայքարի նոր մեթոդներով ու եղանակներով: Այստեղ հանդիպում ենք առավել կազմակերպված հեղափոխականի, որն անհատական ծրագրով ու խմբով հանդես չի գալիս, այլ արդեն ունի իր կուսակցությունն ու ղեկավար մարմինը: Շանթի հերոսներն այլևս չունեն Ռաֆֆու հերոսների ռոմանտիկական անսահման հավատը: Այդ նվիրյալ «անհատականությունն արդեն երկրորդված է բացարձակի ու հարաբերականի միջև, նա իր եսը ոչ թե ծուլում է գաղափարի մեջ, այլև տարրալուծում է կյանքի և մահվան, ունայնության ու գոյի խոհերում»[4]:

Տուրք տալով գրականության առաջադրած ծրագրերին՝ Շանթը շարունակում է Ռաֆֆու և Մուրացանի ռոմանտիկական գաղափարատիպերի ավանդույթը: Ճիշտ է, նրա վեպերի հերոսները հանդես չեն գալիս իրենց գործունեության կարևոր հանգամանքներում, բայց հեղինակը հստակ ուղղություն է տալիս նրանց իդեալներին, որոնք էլ դրսևորվում են նրանց բարոյական վարքագծում:

1892 թվականին Շանթը մեկնում է Գերմանիա՝ ուսանելու Ենայի, Լայպցիգի և Մյունխենի համալսարաններում: Նրա նախընտրությունը գրեթե միշտ կանգ է առնում մանկավարժական գիտությունների վրա: Համալսարանական այդ տարիներին իր իսկ խոստովանմամբ «աշխարհայացքս նոր ձև կառներ»: Մյունխենում հատուկ ուշադրություն է դարձնում պատմության և գեղարվեստի պատմության վրա, իսկ 1896 թվին գրած մի նամակում նշում է, որ ինքը լրջորեն հետաքրքրվում է հասարակական գիտություններով:

Գերմանիայում անցկացրած վեց տարիները բացառիկ կարևոր էին գրողի հասունացման և կայացման գործում: Առաջին երեք տարիների ընթացքում ստեղծվում են նրա «Երգերը» (1891-94 թվականների ընթացքում գրված բանաստեղծությունները), «Դուրսեցիները» և «Վերժին» գործերը: Իսկ հաջորդ վեպերը՝ «Դարձ» և «Դերասանուհին» գրում է Մյունխենում 1897-98 թվերին: Այս չորս վեպերը նրա ողջ գրական ժառանգության մեջ անուրանալի տեղ են զբաղեցնում: Գերմանիայում գրված այս վեպերը նրա մեջ կենդանի ապրող հիշողությունների արդյունք էին, բայց սրանք արդեն անմիջական զգացմունքների հետևանքով գրված գործեր չէին: Հայկական միջավայրում իշխող խոր զգայական աշխարհն արդեն իսկ հաղթահարված էր: Գևորգյան ճեմա-

ռանի դավանած ռոմանտիկ տրամադրությունները իրենց տեղն են գիջում գերմանական դրապաշտությանը: Շանթի աշխարհայացքի լուրջ փոփոխությունները այսպես է նկարագրում Գրիգոր Շահինյանը. «Օրվան աստվածներ են Տարվին և հոլովական իր փիլիսոփայությունը շարունակող գիտնականները, գերմարդը գովերգող Նիցշեն և իր հետևորդները, նորվեկացի անհատապաշտ Իբսեն»[5]: Հետագայում խոսելով այդ շրջանի իր հոգեկան աշխարհի փոթորկումների մասին՝ Շանթը գրում է. «Զգայական աշխարհի փոթորիկները ավելի կույր կռիվներ են, ավելի քառասային ու տարերային, ատով ալ լայն շրջանակներու վրա անմիջապես ազդող: Մտքի և գիտակից կամքի միջամտությունը Աստծո ձայնը այդ քառսին մեջ. կարգի-կանոնի արթնացող պահանջը, գալիք նոր ապագաներուն ըլլալիք ու մեզի դեռ անծանոթ աշխարհներու արաջին հաստումն ու հաստատումը»[6]:

Ի տարբերություն մինչ այդ գրված գործերի՝ ուսումնասիրության շրջանի վեպերը «մտքի և գիտակից կամքի» անմիջական միջնորդությամբ են ստեղծված: Վեպերի գործողություններն ընթանում են հայկական միջավայրում, իսկ հերոսները հայկական միջավայրում մեծացած, երբեմն դրսում կրթություն ստացած, եվրոպական մշակույթին ու կենցաղին լավ ծանոթ մարդիկ են: Նման են նաև հերոսների ձգտումներն ու ցանկությունները: Նրանք բոլորն էլ նպատակասլաց, հասարակական գործունեություն ծավալելու բուռն ձգտումներով ու տենչանքով լեցուն անձնավորություններ են, որոնք միշտ էլ իրենց հայրենիքի լուսավոր ապագայի մասին են երազում: «Դարձի» հերոսները՝ Արտաշեսը, Սերոբն ու Մինասը ոգևորված են իրենց սուրբ առաքելությամբ՝ պիտի ձեռնադրվեն վարդապետ և իրենց կրթությամբ և խոր գիտելիքներով նպատակ ունեն լուսացնել կիրթ ու գիտակից հոգևորականության շարքերը, որոնք անմիջական շփումով միշտ պիտի ծառայեն ու օգնեն ժողովրդին՝ նրա ցավերի ու հոգսերի մեջ:

«Դուրսեցիների» հերոսները՝ Բագրատը, Գևորգը, Սարգիսը ակտիվ հասարակական գործունեություն են ծավալում՝ ապագա սերունդներին կրթելու և ճիշտ դաստիարակելու համար:

«Դերասանուհու» հերոսը՝ Հրանտը, ողջ էությամբ նվիրված է գիտությանը: Իր ֆաուստյան սենյակ հիշեցնող խցում՝ նա ամբողջությամբ տրվել է գիտական փորձերին ու փնտրտուքներին: «Իր բոլոր հերոսները ազգականներու պես կը նմանին իրարու և կը նմանին իրեն: Չեն ուրույնցած: Նույն ազնվականութիւնը, նույն իդէալները ունին, նույն լեզուն կը խոսին: Կարծես տեսական մարդ անհատի մը զանազան հնարավորութիւնները կը մարմնաւորին և ինչ որ շօշափելի, առարակայական բան ունին իրենց մեջ՝ կեցուածքի ձեւերը, հակազդեցութեան կերպեր, փոխառած են հեղինակէն»[7]:

«Դարձը» վիպակում հեղինակը արծարծում է անհատի ինքնորոշման այն գաղափարը, որ արդեն գեղարվեստական փորձառություն է ստացել նա-

խորդ ստեղծագործություններում: Այստեղ արդեն առաքելության գաղափարը քննության է դրվում հոգևոր դասի հասարակական դերի տեսանկյունից»,- գրում է Ս. Սարինյանը:

Մինչ «Դարձ» վիպակի գրությունը Շանթը տարվում է «Մծիրի» պոեմի սկզբունքային ամբողջականությամբ: Պատահական չէ, որ նա հանձն է առնում այդ պոեմի թարգմանությունը: 1890-ականներին գրված «Դարձ» վիպակի թեմային Շանթը նորից անդրադառնում է 1909 թվականին իր «Հին աստվածները» դրամայում՝ ավելի խորացնելով ու զարգացնելով կոնֆլիկտը: Թերևս այս երկերի կոնցեպցիան նույնն է: Արտաշեսի նման աբեղան էլ իր համար անակնկալ բացահայտում է իր նոր էությունը, իր թաքնված եսը, որը նրան տանում է պայքարի ու մաքառման խորհրդավոր աշխարհ: Այդ նոր ու ցանկալի իրականության առկայությունն էլ փոթորիկ է բարձրացնում երիտասարդի հոգում: Նրան ձգում է կնոջ մարմնի անբացատրելի հրապույրները: «Բայց ինչ հրաշալի բան է եղեր կռվիլը անոնց հետ, երբ անոնք իրենց լույծ կուրծքը դեմ կուտան քեզի, երբ իրանց փրփուրը կը զարնե երեսիդ ու աչքերուդ...բոլորը, բոլորը ընկճել կուզեն քեզի, իսկ դու միշտ երեսին անոնց ելևէջքին հետ կու տարբերիս՝ բազկիդ զարկերուն տակ անոնց բոլոր ճիգերը հաղթահարելով...»: Արտաշեսի համար էլ խորհրդավոր ու ցանկալի մի աշխարհ է բացվում՝ նրա բջիջներում արթնացնելով բնության թաքուն զգացողություններն: Այդ նոր զգացողություններն էլ մի տեսակ անզուսպ հպարտություն է առաջացնում նրա ջղերում. «հպարտություն մը իր առնական ուժին, հպարտություն մը իր այդ ուժերեն աղջիկ մը կախված ըլլալուն»:

Ճեմարանը նոր ավարտած և հասարակական գործունեության բուռն տենչանքով տարված Արտաշեսը իր ինքնորոշման ճանապարհին պատրաստվում է վարդապետ ձեռնադրվել: Հոգևորական լինելը Արտաշեսի համար «գործելու դաշտ է»: Արտաշեսի գաղափարները բարձր են ու վեհ՝ լինել ժողովրդի մեջ, ժողովրդին մոտ: Նա և իր ընկերները որոշել են մինչև վերջ գնալ դեպի իրենց նպատակը. «օժտել մեր հոգևորականությունը բարձր կրթության տեր անհատներով, նորոգել հայ եկեղեցին ու ծառայել հայ ժողովրդին»:

Վարակիչ ոգևորությանը է նա խոսում իրենց ձգտումների մասին. ինչպես պիտի կռվով ու պայքարով մաքառեն այն անտարբեր ու շահամոլ, տգետ հոգևորականների դեմ, որոնք անբացատրելի չարությամբ են ընդունում ամեն մի նորամուծություն: Արտաշեսն ատելությամբ է նայում հոգևորականության մեջ տիրող տգիտությանը և պարզ գիտակցում մեր հոգևորականների անպետք դառնալը: «Անտարբե՛ր, շահամո՛լ, եսակա՛ն, տգե՛տ, ո՛չ մեծ գաղափարական ձգտում, ո՛չ անձնազոհություն կամ գեթ մաքուր զգացում»:[8]

Արտաշեսը շուտով հասկանում է, որ ժողովրդին օգտակար լինելու նպատակով իր հոգևորական դառնալու մտադրությունը ինքնին անմտություն է: Հասարակական գործունեություն ծավալելու համար կարող է այլ բնագավառ

ընտրել, մանավանդ որ իր ստացած կրթությունը նման հնարավորություն տալիս էր: Երկար համոզումներ և ապացույցներ պետք չէին Արտաշեսին հասկանալու համար, որ «ինքն իր ամանին մեջ չէ ինկած, թե իր հակումները կրոնավորի պարտականություններուն հետ զույգ չեն երթար»: Ու թեև իր ձեռնադրությունը համարյա կատարված իրողություն էր, դարձի գաղափարը գնալով ավելի ու ավելի է խորանում նրա գիտակցությոն մեջ և շուտով հասկանում է, որ նրա համար արդեն անցյալ է «խուցի չոր կյանքը՝ միայնա'կ ու միակե'րպ, եկեղեցական պաշտամունքները իրենց խունկերովն ու սաղմոսներովը»:

Բարդ է Արտաշեսի դարձի ճանապարհը՝ մտավախություններով ու խորհրդածություններով լի: Ի վերջո նա պարզ գիտակցում է իր վարդապետ լինելու անհնարինությունը: Մեծ թեթևությամբ Արտաշեսը որոշում է իր կյանքն ու ապագան տնօրինել ինքը, ապրել առանց հոգեկան բռնադատման, մեկընդ-միշտ ձերբազատվել «վեղարին երկար ծածկույթից ու փիլոնի կաշկանդող փեշերից»: Արտաշեսը հաստատ որոշում է այլ ճամփա ընտրել: «Հիմա իմ տենչանքս է կռիվով, կյանքի մեջ իմ սեփական ուժերովս ինձի համար ճամփա բանալ»:

«Դուրսեցիներ» վիպակը գրվել է 1894 թ. ամռանը Լեյպցիգում, տպագրվել է «Մուրճ» ամսագրի 1895-96թթ. համարներում: Ապա այն լույս է տեսել առանձին գրքով: Եթե Շանթի նախորդ վեպերում՝ «Երազ օրեր», «Դարձ», գործողությունները կատարվում են ամառանոցում կամ գյուղական միջավայրում և առաջնային դեր էր խաղում բնությունը, ապա այս վիպակում իրադարձությունների կենտրոնը Պոլիսն է: Բնության հետ այստեղ այնքան էլ չենք շփվում, փոխարենը առավել աղմկոտ ու բուռն հարաբերություններ են, վեճեր ու գաղափարների բախումներ: «Գիտակցության նախկին ջինջ ու անդորր կացությունն անցել է «Երազ օրերի» շարքն ու նա ամբողջովին համակվել է քաղաքի անհանգիստ ռիթմով, նրա եռուզեռով, նրա նյարդայ-նությամբ, նրա համակ հակասություններով»[9]: Այս վիպակում Շանթն ար-ծարծում է արևմտահայության ազգային ազատագրական շարժման թեման: 19-րդ դարի 80-90-ական թվականներին ծանր էր արևմտահայության վիճակը: Եվրոպական պետությունների կողմից պարբերաբար արծարծված հայկական հարցն այդպես էլ արդարացի լուծում չգտավ: Հայ ժողովուրդը բազմաթիվ ճակատագրական պահերի ստիպված էր լինում ապավինել իր սեփական ուժերին՝ կազմակերպելով մի շարք հայաբնակ վայրերի ինքնապաշտպանու-թյունը: Բազմաթիվ հայ երիտասարդներ, հավատարիմ մնալով իրենց ազատա-սիրական ոգուն երազում էին մեկնել Երկիր և միանալ ազատագրական շարժմանը: Ազգային ազատագրական շարժման թեմային Շանթն անդրադար-ձավ «Դուրսեցիները» վեպում, «Եսի մարդը» և «Ճամբու վրա» դրամաներում: «Դուրսեցիներ» վեպի ատաղձը հավանաբար Կարինի «Երկրագործական

ընկերություն» գաղտնի կազմակերպության պատմությունն է, թեև վեպը պատկերում է կերպարների բուն գործունեության նախաշրջանը միայն, երբ նրանք առօրյա հոգսերի մեջ երբեմն հիշում են, որ երկիր պետք է գնան»:[10]

Վիպակի երիտասարդ հերոսները՝ դուրսեցիները, Պոլիս են եկել տարբեր գավառներից և սպասում էին հարմար առիթի, որ մեկնեն երկիր և նվիրվեն իրենց կոչմանը՝ հայրենիքի ազատագրման գործին: Բագրատն ու Գևորգը Կարինից էին, Սարգիսը՝ Վանից, իսկ Վասակը՝ Տրապիզոնից: Պատահական հանդիպումից հետո Բագրատն ու Գևորգը մտերմանում են և Ղալաթիայում մի սենյակ վարձելով՝ ապրում են միասին: Նրանց սենյակը դառնում է հավաքատեղի երիտասարդ մտավորականների ու իրենց շրջանակի հասարակական գործիչների՝ հիմնականում ուսուցիչների համար, որոնք «շաբաթը մեկ կամ երկու գիշեր կհավաքվեին հոն...»:

«Վերժին» վիպակը Շանթը գրել է 1896 թվականի ամռանը՝ Լայպցիգում: Այս վեպում Շանթը հոգեբանական նուրբ վերլուծությամբ և գրողի իր վարպետությամբ անդրադառնում է իր նախորդ վեպերում արդեն շոշափված՝ անհատի ինքնադրսևորման և ինքնահաստատման խնդրին:

Վիպակի հերոսուհին, նուրբ ու հրապուրիչ, բավականին խոր ներաշխարհով, Վերժին Պզտիկյանն էր: Իր ցանկությամբ և եղբոր անմիջական օժանդակությամբ սովորել էր ամերիկյան գիշերօթիկ վարժարանում, ուր աչքի է ընկնում իր խելացի մտքերով և համարձակ պահվածքով: Դպրոցն ավարտելուց հետո Վերժինը երկար ինքնահաստատման որոնումների մեջ էր: Տիրանի հետ ծանոթությունից հետո մի որոշ ժամանակ ներշնչանքի առկայությամբ և գրական միջավայրի անմիջական ազդեցությամբ որոշ բաներ է գրում: Այս հրապուրանքը շուտով իր տեղն է զիջում երաժշտությանը, բայց դաշնամուրի իր դասերն էլ կիսատ է թողնում: Օրիորդի անհանգիստ հոգին անվերջանալի փնտրտուքների մեջ է: Պատահական չէ Արշակի զարմանքը, թե «մեր սին ու անտարբեր ընտանեկան կյանքին մեջ այս դժգոհության ծաղիկը ուրկէ՞ է բուսեր»: Խելացի ու համարձակ այս աղջկան դեռ վաղ տարիքից էր բարկացնում կնոջ խոնարհ ու ստրկական վիճակը: Վեպի սկզբից մենք ծանոթանում ենք իր կարծիքներն ու խոհերը ազատ արտահայտող՝ բավականին հետաքրքիր մի օրիորդի հետ, որը շատ էր ցանկանում մեծ դեր ստանձնել և փոխել իր շուրջ ամեն ինչ: Այնուամենայնիվ Վերժինը լավ ըմբռնում էր, որ այդ հասարակության մեջ կինը դեռ պասիվ դիրքերում է, զուրկ անգամ սեփական կարծիքն արտահայտելուց, իսկ եթե երբեմն էլ գրական կամ հասարակական որոշ հարցերի մասին դատողություններ անում են, «միայն շնորհքի համար և ընդհանրապես կկրկնենք ինչ-որ մեծամասնությունը կպահանջե»: Միթե՞ կնոջ կոչումը միայն զարդարվելու, հյուրեր ընդունելու, ճանապարհելու և անհարկի բանբասանքներով զբաղվելու մեջ է: Ո՛չ, Վերժինը հաստատ որոշել էր, որ իր կյանքը չպիտի անցնի կաշկանդված ու ապարդյուն, այլ որևէ

նպատակ և գործելու դաշտ պիտի ունենա: Այս գաղափարներն ավելի կոնկրետանում և հստակվում են Արշակի հետ ծանոթության ու մտերմության ընթացքում: Իսկ երիտասարդի անմիջական օժանդակությամբ տեղի վարժարաններից մեկում սկսում է ուսուցչություն անել: Իսկ շատ շուտով նրա մեջ հասունանում է մի նոր միտք. «մեծ, մեծ կին մը դառնալ, բացառիկ ու կարևոր դէմք մը, բոլորի կարծիքին հակառակ»: Ամբողջ վեպի գաղափարն ընդհանրանում է Վերժինի ինքնորոշմամբ ու նրա անհատականության դրսևորմամբ:

Վիպակի հերոսների մեջ իր խոհերով ու հետաքրքրություններով առանձնանում է նկարիչ էդուարդը: Նրա հոգին համակված է առատ, կենդանություն պարգևող լույսով: Անգամ էդուարդի սենյակն էր ողողված այդ կենարար թարմությամբ: Նրա ողջ կյանքը հագեցած է ստեղծագործական տենչանքով և նա վայելում է արարման հաճույքը: Նրա գաղափարների բառարանում համարժեք են ստեղծել և սիրել հասկացությունները: Նրա կարծիքով չկա ավելի վեհ բան, քան ստեղծելն ու արարելը: «Ստեղծել, չէ որ ատիկա է աստվածութիւնը, այն աստուածը, որ մարդկութիւնը պաշտեր է միշտ, ստեղծող, արտադրող ուժը: Ստեղծելու յափշտակութեան հետ գուցէ միայն սիրելու յափշտակութիւնը չափուիլ կարողանա»:

Շանթի այս վեպերի հերոսները կանգնած են իրենց ինքնորոշման ճանապարհին: Հաղթահարելով ներքին կասկածներն ու մտավախությունները՝ նրանք ճիշտ որոշում են ընդունում:

1.Սովետական գրականություն- 1971 թ., հ.10, էջ 117:
2. Լևոն Շանթն իր մասին:
3. Ս. Սարինյան - Լ . Շանթ, Եր. 1991 թ. էջ 69:
4. Ս. Սարինյան - Լ . Շանթ, Եր. 1991 թ. էջ 69:
5.Գ. Շահինյան - «Ձյուներն ի վեր», 1967 թ., Բ., էջ 41:
6. Շանթ - «Բանահյուսական ճարտարապետություն»:
7.Գ. Շահինյան - «Ձյուներն ի վեր», Բ. , 1967 թ. , էջ 47:
8. Լ. Շանթ- Երկեր, Եր. , 1989թ.:
9. Խ. Սարգսյան - Լ. Շանթ Ե. 1930թ. էջ 35:
10. Ս. Թոփչյան- Լ. Շանթ, Երկեր, առաջաբան: